

տեղիս տեղիս ի ձեռս խիստ անձանց որ ոչ կա-  
րէաք միայն զկերպն տեսանել: Ուստի յայտ է  
ամենեցուն զանցեալ պատմութիւնսն ընթեռնելով  
իրր յառաջի մեր եղեալ երեւի: Եւ դուք յի-  
շեալ լինիջէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ  
Հայր մեր որ յերկինս եւայլն: Օրինակեցաւ  
յամի Տեառն 1743. աւարտեցաւ ի Մայիսի  
20. Թէպէտ յապրիլի ամսոյ վերջացուցաք.  
սակայն ի մայիսի զայլս մնացեալս կատարեցաք  
ողորմութեամբ անմահ թագաւորին Տեառն Աս-  
տուծոյ մերոյ:»,

Սարգիս 1706ին տակաւին Կ.Պոլիս կը  
գտնուէր. վասն զի Աւետիք Պատրիարքի փոխա-  
նորդ՝ Միքայէլ երէց Խարբերդցի 1706 Գեկտ.  
20 թուականաւ Կ.Պոլսէն հաւաքական «Մահ-  
սարական», մը գրած է առ Աղեքս. Կաթող.  
Էջմիածնի, որուն մէջ իբրեւ գլխաւոր կաթողի-  
կեայ՝ «դասք աղթարմայիցն գլխաւորք», կը  
նշանակէ՝ «Եւ հերձուածող սահալթճի Սար-  
գիս վարդապետն:», («Կռունկ», 1863:)

Սարգիս 1713ին ի Կ Պոլիս ուրիշ ձեռա-  
գիր մ'ալ ընդօրինակած է, այն է Մաշտոց մը  
(կը պահուի Bibl. nationale ի Paris, տ. Mac-  
ler F., Catalogue des manuscrits arméniens  
et géorgiens, Paris, 1908, p. 31, Nr. 64):  
Էջ 48 կայ հետեւեալ Յիշատակարանը.

«Գրեցաւ թվին ՌՃԿԲ (= 1713). աւար-  
տեցաւ դեկտեմբերի Ժ. ձեռամ' եւղոկիացի  
Սարգիս եպիսկոպոսի սահէթճոյ. ի փառս Աս-